


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. հունիսին


/վերլուծություն/

2013թ. հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 16848 գործարքներ, որոնց քանակը 2013թ. մայիսի համեմատ աճել է 18.4%-ով, իսկ 2012թ. հունիսի համեմատ՝ 18.8%-ով:

2013թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3950 օտարման գործարքների 73.7%-ը կազմել են առուվաճառքները, 25.7%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 44.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.1%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2013թ. հունիսին, 2013թ. մայիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 23.8%-ով, իսկ 2012թ. հունիսի համեմատ՝ 5.6%-ով:

2013թ. հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 56.2%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. հունիսին, 2013թ. մայիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 43.2%-ով, իսկ 2012թ. հունիսի համեմատ՝ 12.3%-ով:

2013թ. հունիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հունիս 2012թ	հունիս 2013թ.	մայիս 2013թ.
Կենտրոն	414000	428000	428000
Արաբկիր	342050	355500	355500
Քանաքեռ-Զեյթուն	269150	282300	282300
Նոր-Նորք	230250	251000	251000
Ավան	241000	259100	259100
Էրեբունի	238100	249000	248500
Շենգավիթ	237700	254250	254250
Դավթաշեն	262000	274200	274200
Աջափնյակ	229100	247200	247200
Մալաթիա-Սեբաստիա	227500	240000	239000
Նուբարաշեն	140200	152000	151500
Միջինը Երևանում /բացի Նորք- Մարաշից/	257400	272050	271900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հունիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. հունիսի համեմատ, աճել են 0.06%-ով:

2013թ. հունիսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 322 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. մայիսի համեմատ աճել է 1.6%-ով, իսկ 2012թ. հունիսի համեմատ՝ 3.8%-ով:

2013թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունիս 2012թ	հունիս 2013թ.	մայիս 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	112000	114800	114800
	Ապարան	49100	56550	56550
	Թային	61100	64500	64000
Արարատ	Արտաշատ	92500	94800	94800

	Մասիս	108000	115000	115000
	Վեդի	96200	99300	99300
	Արարատ	73300	75100	75100
Արմավիր	Վաղարշապատ	153200	154000	154000
	Արմավիր	118000	121000	121000
	Մեծամոր	86200	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99000	99150	99150
	Գավառ	52800	59000	59000
	Մարտունի	104000	107600	107600
	Վարդենիս	35100	44300	44300
	Ճամբարակ	21100	28000	27500
Լոռի	Վանաձոր	87000	88300	88300
	Ստեփանավան	73500	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	51600	55000	55000
	Տաշիր	42000	47000	47000
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	19500	20000	20000
Կոտայք	Աբովյան	153000	155000	155000
	Նոր Հաճն	128200	128500	128500
	Բյուրեղավան	107100	108100	108100
	Եղվարդ	108500	109300	109300
	Հրազդան	60000	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	84000	85500	85500
Շիրակ	Գյումրի	108900	109300	109300
	Արթիկ	64200	66300	66300
	Մարալիկ	35600	40100	40100
Սյունիք	Գորիս	115000	121000	121000
	Կապան	90100	92100	92100
	Սիսիան	81400	91100	91100
	Մեղրի	67050	80050	80050
	Ագարակ	42000	46000	46000
	Քաջարան	94100	94300	94300
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	84800	95000	94600
	Եղեգնաձոր	116800	124100	123050
	Ջերմուկ	101400	112050	112050
Տավուշ	Դիլիջան	104000	113100	113100
	Իջևան	113000	118100	118100
	Բերդ	50100	60000	60000
	Նոյեմբերյան	41500	49300	49300
	Այրում	24500	31500	31500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. մայիսի համեմատ աճել են 0.06%-ով:

2013թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 425 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 130, մարզերում միասին վերցրած՝ 295: 2013թ. հունիսին, 2013թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 28.0%-ով, ընդ որում Երևանում՝ 56.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 18.5%-ով: 2012թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.4%-ով, ընդ որում Երևանում՝ 4.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 3.1%-ով:

2013թ. հունիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների

/պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները/դրամ/		
	հունիս 2012թ.	հունիս 2013թ.	մայիս 2013թ.
Կենտրոն	462400	476100	476100
Արաբկիր	368550	383000	383000
Քանաքեռ Զեյթուն	279800	295000	295000
Նորք Մարաշ	306800	319200	319200
Ավան	259100	270500	270500
Էրեբունի	228100	239500	239500
Շենգավիթ	244800	255000	255000
Դավթաշեն	263750	276000	276000
Աջափնյակ	238150	250050	250050
Մալաթիա Սեբաստիա	227150	238000	238000
Նուբարաշեն	144500	150500	150500
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	274800	286600	286600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հունիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. հունիսի համեմատ մնացել են անփոփոխ:

2013թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առավաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունիս 2012թ.	հունիս 2013թ.	մայիս 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	133000	136200	136200
	Ապարան	53000	60000	60000
	Թալին	68650	69250	69250
Արարատ	Արտաշատ	98200	100000	100000
	Մասիս	111000	115100	115100
	Վեդի	100200	102300	102300
	Արարատ	87200	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	151300	153100	153100
	Արմավիր	104000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	93050	94800	94800
	Գավառ	52000	57100	57100
	Մարտունի	92100	96000	96000
	Վարդենիս	34000	41000	41000
	Ճամբարակ	25900	31100	31100
Լոռի	Վանաձոր	97200	100000	100000
	Ստեփանավան	87500	90000	90000
	Սպիտակ	113250	114000	114000
	Ալավերդի	46600	50200	50200
	Տաշիր	50100	51900	51900

	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	13200	14000	14000
	Ախթալա	29400	30000	30000
Կոտայք	Աբովյան	153500	157000	157000
	Նոր Հաճն	129700	129800	129800
	Բյուրեղավան	119900	120500	120500
	Եղվարդ	115250	116100	116100
	Հրազդան	78800	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	82000	83000	83000
Շիրակ	Գյումրի	117000	118500	118500
	Արթիկ	61000	63100	63100
	Մարալիկ	48000	52000	52000
Սյունիք	Գորիս	126900	130000	130000
	Կապան	98200	100000	100000
	Սիսիան	89600	96500	96500
	Մեղրի	75300	84500	84500
	Ագարակ	45900	46900	46900
	Դաստակերտ	11600	11610	11610
Վայոց Ձոր	Վայք	82800	90000	90000
	Եղեգնաձոր	111800	116600	116600
	Ջերմուկ	121500	131200	131200
Տավուշ	Դիլիջան	106400	113000	113000
	Իջևան	120000	123100	123100
	Բերդ	57700	60000	60000
	Նոյեմբերյան	46000	48200	48200
	Այրում	34200	36200	36200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. հունիսի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2013թ. հունիսին հանրապետությունում օտարվել են 1218 միավոր /384.91 հա/ հողեր, որից Երևանում՝ 177 միավոր /5.67 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 570 միավոր /337.32 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.10 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 425 միավոր /34.32 հա/, որից Երևանում՝ 101 միավոր /2.86 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 198 միավոր /6.57 հա/, որից Երևանում՝ 70 միավոր /2.21 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 18 միավոր /4.28 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.50 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 5 միավոր /2.11 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 2 միավոր /0.30 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. հունիսին հանրապետությունում օտարված հողերից 985 միավորի /318.14 հա/ նկատմամբ իրականացվել են առավաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 162 միավոր /5.05 հա/, նվիրատվության գործարքներ՝ 225 միավորի /65.69 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /0.60 հա/ և փոխանակության գործարքներ՝ 8 միավորի /1.08 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.03 հա/:

Հանրապետությունում 2013թ. հունիսին, 2012թ. հունիսի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.1%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 21.7%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 7.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 77.8%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 64.72 հա, որից 60.41 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 32.5%-ը կամ 320 գործարքներ /86.48 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 93 միավոր /1.88 հա/, իսկ 66.3%-ը կամ 653 միավորը /230.61 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 69 միավոր /3.17 հա/: 2013թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 12 գործարք /1.04 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. հունիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	2	0.22	50	0.64	41	1.02	1	0.10	3	0.28	39	1.80	26	0.99
Արագածոտն	40	22.96	1	0.10	3	0.15	11	0.33	66	37.45	0	0.00	21	3.23	2	0.21
Արարատ	17	24.02	1	0.03	3	0.07	5	0.06	51	16.34	2	2.16	32	2.64	5	0.04
Արմավիր	7	13.80	1	0.04	3	0.20	3	0.01	53	33.62	1	0.01	40	3.93	3	0.07
Գեղարքունիք	4	2.83	0	0.00	11	0.92	11	0.83	20	20.88	0	0.00	10	1.13	1	0.10
Լոռի	0	0.00	2	0.15	8	0.06	22	0.34	14	18.21	1	0.12	9	0.94	0	0.00
Կոտայք	10	6.17	0	0.00	8	0.76	9	0.07	66	20.50	0	0.00	72	6.62	6	0.16
Շիրակ	0	0.00	1	0.01	4	0.20	5	0.16	19	27.32	0	0.00	14	1.31	1	0.04
Սյունիք	5	3.50	0	0.00	1	0.01	9	0.22	30	19.33	0	0.00	3	0.24	3	0.03
Վայոց Ձոր	3	5.78	0	0.00	0	0.00	6	0.05	13	4.61	0	0.00	7	1.18	3	0.09
Տավուշ	0	0.00	0	0.00	7	0.44	4	0.02	7	2.95	0	0.00	4	0.19	2	0.01
Ընդամենը	86	79.06	8	0.55	98	3.45	126	3.11	340	201.31	7	2.57	251	23.21	52	1.74

Ստորև ներկայացվում է 2013թ. հունիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների և ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյուն ար օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	77	0.98	1	0.02	50	0.64	26	0.32	16	0.89	0	0.00	1	0.20	0	0.00	15	0.69
Արագածոտն	6	0.21	1	0.10	1	0.04	4	0.07	18	9.04	9	8.67	0	0.00	2	0.11	7	0.26
Արարատ	3	0.06	0	0.00	2	0.05	1	0.01	23	24.11	17	24.02	1	0.03	1	0.01	4	0.05
Արմավիր	3	0.01	0	0.00	1	0.003	2	0.01	10	13.67	6	13.43	1	0.04	2	0.20	1	0.003
Գեղարքունիք	3	0.09	0	0.00	3	0.09	0	0.00	23	4.49	4	2.83	0	0.00	8	0.83	11	0.83
Լոռի	4	0.05	0	0.00	2	0.01	2	0.04	28	0.51	0	0.00	2	0.15	6	0.05	20	0.31
Կոտայք	3	0.14	0	0.00	2	0.14	1	0.002	24	6.85	10	6.17	0	0.00	6	0.62	8	0.06
Շիրակ	5	0.19	0	0.00	1	0.04	4	0.15	5	0.18	0	0.00	1	0.01	3	0.16	1	0.01
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	15	3.73	5	3.50	0	0.00	1	0.01	9	0.22
Վայոց Ձոր	3	0.01	0	0.00	0	0.00	3	0.01	6	5.82	3	5.78	0	0.00	0	0.00	3	0.04
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	11	0.46	0	0.00	0	0.00	7	0.44	4	0.02
Ընդամենը	107	1.74	2	0.12	62	1.01	43	0.61	179	69.75	54	64.40	6	0.43	36	2.43	83	2.49

2013թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 32 գործարք /14.67 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. հունիսին, 2012թ. հունիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 14.6%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 5.3 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ աճել է 6.5%-ի: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 35.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 39.0%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 69.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 14.3%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. հունիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	7	5.90	105.6	1105.8	496.7	40	9.42	365.0	12000.0	3594.1
Ապարան	1	1.00	137.5	137.5	137.5	8	5.97	86.5	2727.3	738.2
Թալին	1	1.77	38.2	38.2	38.2	10	5.32	93.6	5494.5	672.5
Ծաղկահովիտ						4	13.96	79.5	1000.0	277.5
Արարատի մարզ										
Արտաշատ	4	10.06	123.7	5555.6	3757.2	22	5.20	335.1	10833.3	2800.0
Մասիս	11	11.83	47.3	138.2	103.2	16	6.20	200.0	11904.8	3085.4
Վեդի	2	2.13	263.8	263.8	263.8	11	4.57	207.0	10795.1	1847.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	4	11.67	60.4	1042.1	553.4	24	14.94	294.3	9090.0	1325.5
Բաղրամյան								90.6	2561.1	772.5
Վաղարշապատ	2	1.76	73.5	492.2	282.8	23	10.71	444.4	11764.7	2340.0

Գեղարքունիքի մարզ										
Գավառ						11	4.06	199.8	1875.0	423.5
Ճամբարակ								60.5	953.3	355.2
Մարտունի						1	0.06	51.1	2850.0	738.5
Սևան	4	2.83	117.9	1221.0	671.8			52.2	2134.8	318.5
Վարդենիս						8	16.77	41.2	2575.1	421.3
Լոռու մարզ										
Ալավերդի						6	4.99	170.4	6424.2	595.2
Գուգարք						3	1.15	234.6	6065.9	764.0
Սպիտակ						1	0.52	250.0	5555.5	730.8
Ստեփանավան						4	11.55	90.6	1686.6	322.5
Տաշիր								45.3	1384.4	157.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	1.20	265.0	492.5	378.8	32	8.22	279.3	11942.7	4355.5
Եղվարդ	7	4.55	236.2	896.7	426.9	28	9.17	174.4	11971.8	2565.5
Հրազդան	1	0.42	783.8	783.8	783.8	4	2.64	130.5	10256.4	1610.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						3	2.32	252.0	1693.1	628.2
Ամասիա						3	10.44	40.9	261.0	125.5
Անի						2	7.05	110.6	546.9	388.2
Աշոցք								58.5	215.8	127.2
Արթիկ						11	7.51	79.4	1428.6	420.0
Սյունիքի մարզ										
Գորիս	4	2.50	149.9	150.1	150.0	18	7.65	92.6	1023.2	730.0
Կապան	1	1.00	621.0	621.0	621.0	6	2.32	120.0	841.6	360.7
Մեղրի						1	0.21	193.0	3000.0	732.7
Սիսիան						4	8.99	46.3	1977.4	546.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	0.28	54.7	54.7	54.7	8	2.08	125.0	10000.0	1920.0
Վայք	2	5.50	64.1	8505.0	4284.6	5	2.52	58.8	1430.7	632.5
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.18	213.3	3783.8	685.5
Իջևան								267.5	9454.5	1245.2
Նոյեմբերյան						6	2.77	46.7	7368.4	882.2

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. հունիսին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	1110.0	2625.0	3183.4	2904.2	14	11799.0	130.7	22200.0	2570.0
Ապարան						1	1410.0	124.1	609.6	390.0
Թալին						3	8900.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						3	10162.0	60.0	214.3	91.5
Արարատի մարզ										
Արտաշատ						12	11760.0	173.9	7140.3	897.0
Մասիս						12	7552.3	187.5	25000.0	1214.5

Վեղի	1	121.9	1614.6	1614.6	1614.6	8	7131.0	126.1	5000.0	662.1
Արմավիրի մարզ										
Արմավիր						10	11406.2	131.6	9090.9	1314.0
Բաղրամյան	1	1200.0	233.1	233.1	233.1	1	1182.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	1	757.9	523.8	523.8	523.8	28	25591.6	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	6	7608.3	113.5	895.0	243.5	2	2640.0	186.6	1084.3	683.3
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի	1	695.0	410.7	410.7	410.7	5	4251.0	119.3	5000.0	283.0
Սևան	1	28.0	1802.1	1802.1	1802.1			240.0	3110.4	315.0
Վարդենիս						3	4378.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի								114.3	1388.9	216.6
Գուգարք	5	249.6	2201.5	4976.6	2991.3	5	5190.0	77.9	14083.3	1264.4
Սպիտակ						4	4245.0	104.9	1348.3	206.5
Ստեփանավան	1	300.0	554.4	554.4	554.4			88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	3	3000.0	410.0	641.0	564.0	39	31929.8	264.5	35353.5	2007.0
Եղվարդ	3	3241.0	1261.5	1279.6	1272.1	29	27753.2	173.6	27000.0	2857.4
Հրազդան						4	6520.0	117.7	34848.5	1317.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	240.0	3150.0	3150.0	3150.0	5	6466.2	113.6	18750.0	334.5
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի								67.9	180.6	175.1
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ	2	1400.0	607.3	607.3	607.3	9	6675.0	111.8	5000.0	217.3
Սյունիքի մարզ										
Գորիս						1	1200.0	112.2	1700.0	368.0
Կապան	1	76.8	1188.8	1188.8	1188.8			67.9	2638.9	302.0
Մեղրի						2	1200.0	68.5	632.9	212.5
Սիսիան								123.5	875.0	209.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						5	4305.0	96.7	7659.6	505.8
Վայք						2	7450.0	120.7	1448.3	223.4
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	117.0
Իջևան	7	4429.0	3000.0	3000.0	3000.0	3	1901.0	74.1	14423.1	518.5
Նոյեմբերյան						1	29.3	125.0	1948.1	228.0

2013թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 809 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 74.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2013թ. հունիսին, 2013թ. մայիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 45.5%-ով, իսկ 2012թ. հունիսի համեմատ՝ 32.4%-ով:

2013թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 54 բնակարանների, 79 անհատական բնակելի տների, 331 հասարակական, 82 արտադրական նշանակության օբյեկտների, 241 հողերի, 21 ավտոտնակների և 1 այգետնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. հունիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 11 վարձակալության գործարքների, այդ թվում 1 միավոր /0.002 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2013թ. մայիսի համեմատ աճել է 2.8 անգամ, իսկ 2012թ. հունիսի համեմատ՝ մնացել է անփոփոխ: 2013թ. հունիսին հանրապետությունում վարձակալված 1474.62 հա հողերից 2.27 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1472.34 հա հողերից 486.82 հա կազմում են

գյուղատնտեսական նշանակության, 980.96 հա արդյունաբերական օբյեկտների, 0.58 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 974.18 հա, որից 3.00 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2240 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.3%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. մայիսի համեմատ աճել է 38.6%-ով, իսկ 2012թ. հունիսի համեմատ՝ 10.6%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /52.9%/, առանձնատների /22.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.4%/ և հողերի /6.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1253 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. մայիսի համեմատ աճել է 71.9%-ով, իսկ 2012թ. հունիսի համեմատ՝ 12.9%-ով:

2013թ. հունիսին հանրապետությունում գրավադրվել են 188.92 հա հողեր, որից 8.62 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 82.8%-ը կամ 156.36 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 48.31 հա, որից 48.00 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. հունիսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 180 գործարքներ, որից 131-ը՝ Երևանում: 2013թ. մայիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 31.4%-ով, ընդ որում Երևանում՝ 61.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 12.5%-ով: 2012թ. հունիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 30.4%-ով, ընդ որում Երևանում՝ 63.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 15.5%-ով:

2013թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1812 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2013թ. մայիսի համեմատ աճել է 26.7%-ով, իսկ 2012թ. հունիսի համեմատ նվազել է 5.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.8%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /29.4%/:

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե